ՀՏԴ 82.09 *Գրականագիտություն*

ՄԵԿ ՀԵՐՈՍԻ ԿԵՆՏՐՈՆԱՅՈՒՄԸ Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ «ԱՐՏԱՎԱԶԴ»[1] ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ

Ժ. Բեգլարյան

Հ. Խաչատրյանի՝ Արտաշեսյան գահատիրության մասին եռապատումի երկրորդ գիրքը «Արտավազդ» պատմավեպն է, որը լույս է տեսել 1975 թվականին: Այն հայ գրականագիտության մեջ հիմնականում արժևորվել է ակադեմիկոս-գրականագետ Ս. Արզումանյանի կողմից, որն իր քննական վերլուծության մեջ տալիս է վեպի այուժետային հիմնական գիծը, գաղափարաբանությունը, սկզբնաղբյուրներն ու կառուցվածքային որոշ առանձնահատկություններ՝ այս ամենը զուգահեռելով կենտրոնական դեմքի՝ Արտավազդի ներքին հոգեբանական ներսուզումների բացահայտումներով[2]:

Հայոց Արտավազդ արքայից արքան (մ.թ.ա. 55-34) Տիգրան Մեծի որդին է, որ հորից ժառանգում է անբեկ մի պատգամ. «Զպատերազմել Պարթևստանի դեմ, երբեք չաջակցել Հռոմին[3], թեև Տիգրան Մեծի կողմից մ. թ. ա. 66թ. Արտաշատում Պոմպեոսի հետ կնքած պայմանագրի համաձայն, Հայաստանը հանդիսանում էր «հռոմեական ժողովրդի բարեկամն ու դաշնակիցը»[4], իսկ հռոմեական ժողովրդի բարեկամ ու դաշնակից լինել՝ նշանակում էր ընդունել Հռոմի գերիշխանությունը և պարտավորվել պատերազմի դեպքում նրան օգնել զորքով: Պատմական հետագա իրադարձությունների հենքի վրա են ծավալվում «Արտավազդի» վիպական գործողությունները: Հեղինակը հիմնականում հավատարիմ մնալով պատմական փաստանյութին, կերտում է Արտավազդ արքայից արքայի ողբերգական կերպարը, որ գրողի ընդհանուր կերպարային համակարգում նոր որակ ու յուրացում է:

Արտավազդի կերպարին գրողը դիմում է «Տիգրան Մեծում»[5], ուր մի քանի կայացած դրվագներում Արտավազդը վեր է հանվում որպես հայոց գահի ժառանգորդ, բանաստեղծ ու թատերագիր, հոր՝ Տիգրան Մեծի վերջին տարիների խաղաղասիրական քաղաքականության կրողն ու շարունակողը:

«Արտավազդում» հետաքրքիր վիպական մուտք է ստեղծվում, այդտեղից բխեցվում ժամանակաշրջանի բարդ քաղաքական հակադրությունները և դրանց ճակատագրական նշանակությունը Հայաստանի համար: Արտավազդ արքայից արքան, որին աստվածները բանաստեղծ, թատերագիր ու իմաստասեր են արարել, պետք է կարողանար Հռոմի քաղաքական խարդախությունների առանցքում հաստատուն պահել Տիգրան Մեծից

---

[1] *Հ. Խաչատրյան, Արտավազդ, Երևան, 1975:*
[2] *Ս. Արզումանյան, Սովետահայ վեպը, IV հատոր, Երևան, 1990:*
[3] *Ռ. Մանասերյան, Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Երևան, 1982, էջ 233:*
[4] *Հ. Ժամկոչյան, Հայ ժողովրդի պատմություն, 1963, Երևան, էջ 190:*
[5] *Հ. Խաչատրյան, Տիգրան Մեծ, Երևան, 1972:*

ժառանգած տերության սահմանները, հեղինակությունը, նյութական, հոգևոր ու բարոյական արժեքները՝ առանց խաթարելու իր բանաստեղծական էության ազնվությունն ու վեհությունը: Գրողը վեպի առաջին իսկ էջերում ի ցույց է հանում հերոսի ներքին հոգեբանական տագնապները: Հարի՞ր են, արդյոք ու համատեղելի արքա և բանաստեղծ արժույթները, ինքը կկարողանա՞ իրար մերձեցնել իրականի ու ցանկալիի սահմանները: Երազումայն տաճարի ավագ քուրմ Գոշը, որ Հայոց ժամանակի տարեգիրն է և Հայոց տան իրադարձություններն ուղիղ և կոր գծերով հավերժացնում է Երազամույնի տարեգլխի պատի քարերի վրա, խորաթափանց իմաստությամբ անհամատեղելի է գտնում այդ երկու հասկացությունները. «Բանաստեղծի և իմաստասերի համար ժամանակի խազեր չկան, արքայից արքա, նրանք քայլում են բոլոր խազերի ու պատնեշների վրայով: Երկրի գահակալը պարտավոր է տեսնել մեր պատի ամենօրյա խազերը: Ոստնելը կարող է կորստաբեր լինել»[6]: Ըստ Գոշի՝ մեկի ու մյուսի զուգորդումը հնարավոր կլիներ, եթե աշխարհի բոլոր գահերին բանաստեղծներ ու իմաստասերներ բազմեին: «Իսկ այդպիսի բան չի կարող լինել ոչ հիմա, ոչ վաղը, ոչ էլ հազար տարի հետո: Արքունիքներում բանաստեղծներ չեն ծնվում, քո ծնունդն էլ աստվածների խաղ է եղել»[7],- իմաստասիրում է ավագ քուրմը:

Ժամանակը հատու է և ոչինչ չի ուշացնում: Վեպի «Այգ»[8] գլխում արքայից արքան երեք նամակ է ստանում: Մեկն Ասորիքից գրում է Հռոմի կոնսուլ Կրասոսը, մյուսը՝ հռոմեացի ականավոր գրող, ճարտասան ու քաղաքական գործիչ Կիկերոնը, երրորդը Ատրպատականի արքա Մար Արտավազդից է: Եթե Կիկերոնի նամակն Արտավազդի արժևորումն է՝ որպես իմաստասերի, ճարտասանի ու բանաստեղծի, ապա մյուս երկու նամակները պահանջներ են: «Ես որոշել եմ մի քանի ամիս անց,- գրում է Կրասոսը,- արշավել Պարթևաց աշխարհի վրա: Դու՝ որպես բարեկամ ու դաշնակից, պետք է օգնես ինձ: Պատրաստվիր ու քո բանակով միացիր ինձ... Երեք ամիս հետո ես քեզ կսպասեմ Եփրատի ափին»[9]: Իսկ Մար Արտավազդը, որ Տիգրան Մեծի աղջկա՝ Հուտոմայի որդին է, Արտավազդից պահանջում է Ատրպատականին վերադարձնել Վարարակի ավազանը, որը Տիգրան Մեծը կցել էր Հայքին, քանի որ այնտեղ հնուց ի վեր հայեր են ապրում: «Հակառակ դեպքում,- գրում է Մար Արտավազդը,- ես կհրամայեմ, որ իմ բանակը ուժով գրավի Վարարակը»[10]: Թեև Արտավազդը բանաստեղծ-թատերագիր է, բայց ամուր է կանգնած այն հողի վրա, որը Հայաստան աշխարհ է կոչվում: «Մինչև այժմ ես թատերգություններ էի գրում ուրիշների մասին: Արդ սկսվում է իմ թատերգությունը»[11]:

---

[6] Հ. Խաչատրյան, Արտավազդ, էջ 8:
[7] Նույն տեղում, էջ 3:
[8] Նույն տեղում, էջ 3:
[9] Նույն տեղում, էջ 12:
[10] Նույն տեղում, էջ 13:
[11] Նույն տեղում, էջ 13:

Հ. Խաչատրյանի հերոսն այլ պատկերացում ունի դաշնակից ու բարեկամ լինելու մասին: Ըստ նրա՝ Հռոմի դաշնակից ու բարեկամ լինել՝ չի նշանակում լծվել Հռոմի ռազմական կառքին: Իսկ Մար Արտավազդի պարագայում՝ «Ես ոչ միայն Վարարակի նման մի մեծ տարածք, այլ մի կանգուն հայկական հող չեմ զիջի ո՛չ Մար Արտավազդին, ո՛չ Հռոմին, ո՛չ պարթևներին»[12]: Ծարունակության մեջ խոսում է բանաստեղծը. «Ես հայկական հող չեմ զիջի նույնիսկ աստվածներին»[13]:

Ամեն մի արքա հետնորդներին պատգամում է անսասան պահել երկրի ինքնությունն ու սահմանները: Իսկ ի՞նչ է պատգամում բանաստեղծը, որի ունեցածն իր միտքն ու խոսքն է: Այլ է բանաստեղծի պատգամը. «Պետք է զրուցել աստղերի հետ: Ով չի զրուցում, նրա սրտում մեծ վիհ է բացվում չարության ոգու համար»[14]:

«Արտավազդում» քաղաքական իրավիճակներն արագորեն են փոփոխվում, ինչով և պայմանավորվում են վիպական գործողությունների դինամիկ զարգացումները: Հռոմի եռապետ Կրասոսը, չլսելով պարթևների վրա Հայաստանով արշավելու Արտավազդի խորհուրդը, Միջագետքի անապատային հարթավայրերով առճակատման է գնում պարթևների դեմ: Արտավազդ արքայից արքան նրան խոստացած զորական ուժ չի ուղարկում, որովհետև պարթևները Օրոդես արքայի գլխավորությամբ մտնում են Հայաստան: Կրասոսի դեմ ելնում է պարթևների տաղանդավոր զորավար Սուրենը, պարտության մատնում հռոմեացիներին, անխնա կոտորում հռոմեական զորքը, սպանում Կրասոսին և նրա գլուխն ուղարկում Օրոդես արքային, որն այդ ժամանակ, Արտավազդի հետ բարեկամացած, Արտաշատում հույն դերասանների ներկայացրած Էվրիպիդեսի «Բաքոսուհիներն» էր դիտում: Գրողը տարբեր միջադեպերով արդարացնում է Արտավազդի պարթևական կողմնորոշումը: Վեպում այդ մասին ոչ միայն արքայից արքան է խորհում, այլև նրա՝ իրար հակաճառող պալատական խորհրդականներ Գայլն ու Վարազը, պարթևների զորավար Սուրենը: «...Մենք արյունակիցներ ենք արմենների հետ և չպետք է կռվենք նրանց դեմ: ...Պետք է արմենների հայացքը կտրել Հռոմից և ստիպել, որ նրանք նայեն մեզ՝ իրենց հին ու մշտական հարևանին»[15]:

Արտավազդը համոզված է, որ հանգամանքների թելադրանքով պարթևների հետ իր դաշնակցությունը Հռոմն իրեն չի ներելու. «Հռոմը մի օր Ասիայից կպահանջի Կրասոսի գլխագինը: Եվ կարող է պահանջել ոչ միայն պարթևաց աշխարհից»[16]:

Վարպետ գրչով է Հ. Խաչատրյանը վեր հանում իր հերոսի հոգու դրամատիզմը, նրա երկփեղկված եսը: Տերունական հոգսերը քաշում են նրան, կպցնում հողին: Արտավազդը լսում է Գողթան երգիչների ձոներգերը Հայոց

[12] Հ. Խաչատրյան, Արտավազդ, էջ 15:
[13] Նույն տեղում, էջ 15:
[14] Նույն տեղում, էջ 15:
[15] Նույն տեղում, էջ 46:
[16] Նույն տեղում, էջ 76:

երկրին, մտահղանում գեղեցիկների քաղաքի՝ Արտավազդավանի կառուցումը, ներսուզվում իր մեջ, դատողություններ անում գրողի կոչման, գրական երկի մնայնության մասին, դժգոհ մնում ինքն իրենից. «Ես չեմ կարողանում առանձնանալ իմ հերոսների հետ: Իմ գրական երկերի ու տերունական հրովարտակների տողերը խառնվել են իրար»[17]: Ամենազոր աստվածը խոժոռ է նայում նրան, չի բարձրացնում բանաստեղծական ոլորտներ: Արքայից արքան չի էլ կարող կտրվել հողից, երբ շուրջը եղկելի դեպքեր են կատարվում: Վեպում հասակով մեկ իրար դեմ կանգնում են խոհուն քաղաքագետն ու բանաստեղծ-թատերագիրը՝ իր փխուր հոգով: Երկուսի վրա իշխողը, սակայն, հայկական ազնվազարմությունն ու մեծահոգությունն է: Ազնվազարմությամբ ու մեծահոգությամբ քաղաքականության մեջ հաղթող դուրս չես գա: Քաղաքականությունը ճկուն խաբեություն է, որին չի գնում Արտավազդ արքան:

«Արտավազդի» «Ծանթակող»[18] գլխում վիպական գործողությունների առանցք է բերվում Մարկոս Անտոնիոսը՝ հռոմեական երկրորդ triապետության կոնսուլներից մեկը: Եթե Կրասոսը պատմության մեջ փայլել է իր ագահությամբ, ապա Մարկոս Անտոնիոսը մարդկությանը հայտնի է իր ցոփ կյանքով ու արյունոտ հաշվեհարդարներով: Նա էր վարում Արևելքի գործերը և սկսում է վերաձևել Միջերկրայքի երկրների սահմանները: «Արտավազդի» վերոհիշյալ գլխում վիպական գործողությունների առանցք է գալիս նաև Եգիպտոսի թագուհի Կլեոպատրան: Հ. Խաչատրյանը, մի քանի էջի վրա տալով Անտոնիոսի և Կլեոպատրայի՝ որպես պատմական սուբյեկտների, բնութագրումները, նկարագրում է նրանց առաջին հանդիպումը Տարսոնում: Հեղինակն, ընդհանրապես, համարձակորեն է մոտենում համաշխարհային պատմագրության և գրականության մեջ արժևորված այս երկու պատմական անհատների կերպավորմանը՝ ծանոթագրության մեջ հիշեցնելով Պլուտարքոսի «Անտոնիոս» կենսագրական գիրքը և Շեքսպիրի «Անտոնիոս և Կլեոպատրա» ողբերգությունը[19]:

Մարկոս Անտոնիոսը, որի համար աշխարհի հենքը մերկ կինն ու կարմրաթույր գինին է («Աշխարհն իր սնունդը առնում է գինուց և հենվում կնոջ սրունքների վրա»)[20], Կլեոպատրային դիմավորում է գլուխը կորցրած. «Կլեոպատրայի սիրավառ հայացքը սրի պես կտրեց բոլոր այն թելերը, որոնք Մարկոս Անտոնիոսին կապում էին աշխարհի ու մարդկանց հետ»[21]: Անսխալ են գործում Կլեոպատրայի հաշվարկները. «Ես պետք է վրեժ լուծեմ Հռոմից և հռոմեացիներից... Կեսարն ինձ դարձրեց իր ստրկուհին, ես էլ Մարկոս Անտոնիոսին կդարձնեմ իմ ստրուկը»[22]: Անտոնիոսը պատրաստ էր աշխարհն ընծայաբերել իր հոմանուհուն:

---

[17] *Հ. Խաչատրյան, Արտավազդ, էջ 73:*
[18] *Նույն տեղում, էջ 76:*
[19] *Նույն տեղում, էջ 271:*
[20] *Նույն տեղում, էջ 106:*
[21] *Նույն տեղում, էջ 115:*
[22] *Նույն տեղում, էջ 115:*

Կորզելով ծերակույտի համաձայնությունը՝ Անտոնիոսը Հայաստանի և Ատրպատականի վրայով արշավում է պարթևների վրա: Ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում գրողը երևան է հանում Արտավազդ-Անտոնիոս փոխհարաբերությունը: Առանց մեծ ճակատամարտ տալու՝ Ատրպատականում պարտված ու հալածված Անտոնիոսն իր բանակով ապաստան է գտնում Արտավազդի մոտ: Հենվելով պատմական փաստանյութին՝ Հ. Խաչատրյանը փիլիսոփայական հետաքրքիր լուծում է տալիս դեպքերին՝ դրանից բխեցնելով վեպի գլխավոր դեմքերի վարքագծերը: Մեծահոգությունն ու առատաձեռն հյուրընկալությունը հավասարակշիռ պահվածք են Արտավազդի համար, ոչ թե իրավիճակի պարտադրած կեցվածք: Այդ ամենն ազգային բնույթ է, ինչն օտար, անհասկանալի, զարմանալի է Անտոնիոսի համար, որի համոզմամբ՝ փառքի գագաթներ տանող բոլոր ճանապարհներն անցնում են ուխտադրժության կատարներով. «Ես քո տերության սահմանները մտա ուժասպառ ու սովահար եղած իմ բանակով, դու կարող ես գերել ինձ և իմ բոլոր լեգեոնականներին: Այդպես կվարվեին պարթևները և հռոմեացի շատ զորապետներ:

- Ես չգիտեմ, թե ինչպես կվարվեին նրանք, եռապետ, բայց դու ինչ-որ բան շփոթում ես: ...Մենք զինակիցներ ենք: Մեր աստվածները պատժում են ուխտադրուժներին»[23]: Սա ազգային հոգեբանության ու վարքագծի դրսևորում է, որ չի փոխվում Արտավազդ-Անտոնիոս-Կլեոպատրա փոխհարաբերության ոչ մի շղթայում: Ազգային բարոյական արժույթները գրողը վեր է հանում որպես յուրովի աստվածություններ, և դրանց ոտնահարումն անթույլատրելի է ցանկացած ռազմական, քաղաքական, դիվանագիտական հարաբերություններում: Երևույթների փիլիսոփայական նման իմաստավորումից է հեղինակը բխեցնում գլխավոր հերոսի ողբերգական կործանումը, որը պարտություն չէ, այլ ազգային հոգեբանության հաղթանակ ու հավերժացում: Անտոնիոսը երկրորդ անգամ Հայաստան է մտնում որպես բարբարոս ասպատակող: Արտավազդն իրենով է փակում ուխտադրուժի ճանապարհը և շղթայակապ ընծայաբերվում Կլեոպատրային:

«Արտավազդում» ռազմաքաղաքական շարժերի նկարագրությունները միտված են գլխավոր հերոսի հոգեբանական դրամատիկ կիզակետումների գեղարվեստական վերարտադրմանը: Արտավազդ արքայից արքան նահատակ է, աստվածություն: Նրա վերադարձին սպասում է գալիքի հայը: Արտավազդի հոգեբանության վեհության համայնապատկերում գրողն ընդգծում է Անտոնիոսի և Կլեոպատրայի ինքնադրսևորման ունայնությունը: Արտավազդն իդեալ հերոս է, և գրողը դրան գնում է նպատակադրված: Ոչ մի հանգամանք չի կարող սասանել ազգային հպարտությունն ու արժանապատվությունը, անգամ ընտանիքի գերյալ անդամների անվտանգությունը: Սա պատմական փաստ լինելուց զատ՝ նաև գրողական մենկնակետ է, որն «Արտավազդում» ընդգծվում է պոետական բազմազան դրսևորումներով: Մի դեպքում մենախոսություն է, մի այլ դեպքում՝ տեսիլք, խորհուրդ, մյուս դեպքում՝ թատերգության զուգակցում վիպական նյութին:

---

[23] *Նույն տեղում, էջ 126:*

Վեպում արքա և բանաստեղծ զուգակշռույթը տատանվում է ի շահ բանաստեղծի՝ որպես վերուստ շնորհված արժեքի: «Ես իմ մտքի քուրայում կերպարներ կոփեցի բեմի համար և ձգտեցի թատերգություններով ու իմաստությամբ մրցել աշխարհի հետ: Արդարուսույց խոսքի իմ նժույգներով ես արշավեցի Հելլադա ու Հռոմ, Պարթև և Եգիպտոս, գրավեցի շատ բեմեր, խնդացրի մարդկանց և սթափության մղեցի չարասիրտներին»[24]:

Վեպի «Բավական»[25] գլխում «հայոց աստվածների դատը» ներկայացված է որպես բանտված արքայից արքայի վերջին թատերգություն: Թատերգության մեջ մեղադրյալի աթոռին նստած են արքայից արքան և Անահտական տաճարի քրմապետը: Սերունդների անունից նրանց մեղադրում է հայոց աստվածների հայր Արամազդը: Դատին ներկա Անահիտ, Վահագն, Տիր, Աստղիկ, Վանատուր աստվածները պաշտպանում են Արտավազդի դատը, արդարացնում նրան որպես արքայի և բանաստեղծի: «Հայերը փորձություններ կկրեն, բայց կդիմանան մինչև այն ժամանակ, երբ աշխարհի բոլոր ժողովուրդները բանաստեղծ դառնան: Ճարտարելու և բանաստեղծելու ուժը կպահի հայերին»[26]: Սա հայոց Տիր աստծու համոզմունքն է: Դատը եզրափակվում է Արտավազդի խոսքով. «Իմ երջանկությունն այն է, որ աշխարհին ու մարդկանց նայեցի բանաստեղծ-թատերգակի հոգով: Ես բեմից չափեցի իմ թշնամիների և բարեկամների գործերը: Բարեկամներիս հավատում էի, թշնամիներիս ստիպում բարեկամանալ: Հետո ինքնակամ զոհասեղան բարձրացա: Հիմա ես չափել չեմ կարող, թե դրանից ինչ ավելացավ և ինչ պակասեց աշխարհում[27]:

Կառափնարանից առաջ Արտավազդին տեսիլքվում է հոր ահեղասաստ ոգին: «Քեզ խաբեցին ու մահվան դատապարտեցին, որովհետև գուսանի սրտով չափեցիր աշխարհի գործերը»[28]:

Գրողը բացարձակացնում է հերոսի վեհացումը, նրան անմահացման տանում անվերապահ հավատով. «Կգլխատի՞: Հետո ինչ: Իմ հոգու բոցերով ես թրծել եմ երգերիս տողերը: Ալեքսանդրիայի փարոսն ի՞նչ է իմ տող-կանթեղների լուսափնջի մոտ»[29]:

Ակադեմիկոս Ս. Արզումանյանը «Արտավազդի» գրականագիտական դիտարկման մեջ նկատում է. «Ցավոք, Հ. Խաչատրյանը «Արտավազդ» պատմավեպում նկատելի տեղ է հատկացրել օտար տերությունների՝ մասնավորապես Հռոմի, Եգիպտոսի, Պարթևստանի պատմության նկարագրությանը: …Ավելի լայն տարածություն են զբաղեցնում օտարահունչ կերպարները՝ Մարկոս Անտոնիոսը, Կլեոպատրան, սրանց հետ այս կամ այն կերպ առնչվող փոքր տրամաչափի արբանյակ հերոսները»[30]:

---

[24] *Հ. Խաչատրյան, Արտավազդ, էջ 155:*
[25] *Նույն տեղում, էջ 232:*
[26] *Նույն տեղում, էջ 233-234:*
[27] *Նույն տեղում, էջ 236:*
[28] *Նույն տեղում, էջ 251:*
[29] *Նույն տեղում, էջ 257:*
[30] *Ս. Արզումանյան, Սովետահայ վեպը, էջ 543:*

Իրոք, «Արտավազդում» ծավալուն տեղ են զբաղեցնում Մարկոս Անտոնիոսն ու Կլեոպատրան: Գրողն ստեղծելով Մարկոս Անտոնիոս-Կլեոպատրա-Արտավազդ հակադրությունը, դրանով կենտրոնացնում և կերպարային ամբողջականություն է հաղորդում Արտավազդի կերպարին: Վեպի գրեթե բոլոր սյուժետային գծերը գալիս են լրացնելու գլխավորին՝ Արտավազդի գծին:

Յուրաքանչյուր գծով գրողը գլխավոր հերոսին բացում է բնավորության ու բնույթի որևէ կողմից: Օգտագործելով ձկնորս ստրուկների ապստամբելու և դաժանորեն պատժվելու միջադեպը՝ գրողը միջավայր է ստեղծում, որ հերոսը խորհի իրականության դաժան օրենքների շուրջ, գա այն համոզման, որ բոլոր թագերն արյունոտ են, ու իրենն էլ արյունոտվեց. «Արքա Արտավազդը հաղթում է բանաստեղծ Արտավազդին: Հաղթելը քիչ է, սպանում է նրան»[31]:

Արքան պայծառ լավատեսությամբ քննում է երկրի գործերը, Արտավազդավան կառուցում, այնտեղ բնակեցնում իրար հետ ամուսնացրած ընտրյալ գեղեցիկներին, արդյունքում համոզվում, որ ոչինչ ենթակա չէ բռնության, հատկապես սերն ու ամուսնությունը հարկադրանքի ենթակա չեն: «Գողթան գուսանները»[32] գլխում խոսելով հայոց աշխարհի երգեցիկ լարի՝ Գողթան գավառի, գողթանցիների սոսու, Արեգաճայն քարանձավի մասին, վիպասանը հավելում է. «Այս գավառում է անցել արքայից արքա Արտավազդի մանկությունը: Այստեղ նա սովորել է վիպել ու երգել: Ճանաչում է գուսաններից ու վարձակներից (վարձակ - կին գուսան, ծանոթ. Հ. Խաչատրյանի[33]) շատերին և գիտի նրանց բոլոր ասքերն ու առասպելները»[34]: Վերոհիշյալ գլխից են սկսվում Արտավազդ-Բամբիռ-Պագ հարաբերություն-ները, որոնք վեպի հետաքրքիր ու իմաստավորված հանգույցներից են: Վեպի Արտավազդ-Արտաշես գծում Արտաշեսն ավելի սթափ մոտեցում է ցուցաբերում հայ-հռոմեական հարաբերություններին, ավելի կոշտ դիրքորոշում հուշում հորը, որը, սակայն, համոզված է, որ քաղաքական հարաբերություններում խոհուն համբերատարություն ցուցաբերելն ավելի ճիշտ է: Արտավազդ-Արտաշես գիծը ձգվում է մինչև վեպի ավարտը: Հոր եղերական մահից հետո պարթևների օգնությամբ Արտաշեսն իրեն հայոց արքայից արքա է հռչակում, դաժան հաշվեհարդար տեսնում Հայաստանում գտնվող հռոմեացիների հետ՝ կոտորել տալով նրանց մինչև վերջին հռոմեացին: Նա ժառանգորդն է ոչ թե հոր բանաստեղծական հոգու, այլ պապի՝ Տիգրան Մեծի ահեղության:

«Արտավազդն» առավելապես պատմաքաղաքական, հայրենա-սիրական վեպ է: Նրա հիմնական գաղափարաբանությունը պատմական դժվեմ ժամանակներում Հայաստանի՝ ի դեմս Արտավազդ արքայից արքայի, խաղաղասեր դիրքորոշումն է: Արտավազդն իր մեջ ամբողջացնում է Հայաստանն ու հայ ժողովրդին: Վեպի գլուխներում, որոնք հերթակայված են

[31] *Հ. Խաչատրյան, Արտավազդ, էջ 24:*
[32] *Նույն տեղում, էջ 66:*
[33] *Նույն տեղում, էջ 270:*
[34] *Նույն տեղում, էջ 66:*

հայոց օրվա ժամանումներով, վեր է հանված Արտավազդ արքայի ներքին և արտաքին քաղաքականությունը: Բոլոր հանգամանքներում նրա մոտեցումները կառուցողական, խաղաղասիրական են: Գրողը դա բխեցնում է վեպի հիմնական գաղափարաբանությունից: Գլխավոր հերոսի գերնպատակը սերունդներին հզոր ու բարոյական անաղարտ նկարագրով երկիր ժառանգելն է: Հայրենասիրության նրա տեսությունն ընդգծված է վեպի առաջին էջերում: Այդ մասին խոսում է Ցիցերոնը արքայից արքային ուղղած նամակի մեջ. «Բոլոր հայերի արյան մեջ ներարկվել է Արմենիա երկրի պաշտամունքը: Քո նախնիների նման դու (Արտավազդը - Ժ. Բ.) էլ ես քարի վրայից մայրական կաթ ընդունել»[35]:

Իմաստասեր Արտավազդի մարդագիտական տեսության մի կարևոր ընդգծումն էլ ազգային խառնվածքների կայուն և դարերի ընթացքում անփոփոխ մնալու գաղափարն է: Այս ընդգծումը ևս արվում է վեպի սկզբում: Միայն գլխավոր հերոսը չէ, որ վեպում գնում է գիտակցական մահվան: Ուխտադրուժ հռոմեացիների դեմ ելնում է ողջ երկիրը, զորական ուժը, արտավազդավանցիները, Անահտական տաճարի քուրմ-զորականները: Ծերունի Գեսը մահն ընդունում է աղաղակը շուրթերին: «…Ձեզ վրա գալիս են հռոմեացիք, պատերազմ է, պատերազմ, փակեք հայոց դարպասները, բոլոր դարպասները»[36]: Հայրենյաց գործի համար նահատակվում են ասպետ Բագարատը՝ դրանիկ գնդի երեք հարյուր զորականներով, Անահտական տաճարի քրմապետը, նահապետ Գագը, բազեապան Հերը, երեզվանցի Պերճը: Իսկ հռոմեացիների կողմից գերված և Ալեքսանդրիա հասցված ստրուկ Պագը Կլեոպատրայի հրամանով դառնում է բանտարկված Արտավազդի սպասավորը և սպանվում Արտավազդին կառափնարան տանելուց առաջ:

Անտոնիոսն ու Կլեոպատրան պատմության բեմից հեռանում են խայտառակ ինքնասպանությամբ: «Ծերակույտը որոշեց Մարկոս Անտոնիոսի անունը հասցնել Լեթայի (մոռացության աստվածը - Ժ. Բ.) ջրերին»[37]:

Արտավազդը միֆականացվում է իր ժողովրդի պատմական հիշողության մեջ. «Նա ազգն է և աշխարհի ամենահիմաստուն գիրքն է գրում, զավակս: Նա պիտի գա և բոլոր մարդկանց շնորհի անմահության գաղտնիքը»[38],- ասում է Արտավազդի երկու հարյուր երեսունամյա ծերունի ժամանակակիցը նոր սերդնի ներկայացուցչին:

Ահեղ աշխարհում բանաստեղծությամբ ու բարությամբ հավերժելու գաղափարաբանությունը գրողը բխեցնում է հայոց ազգային հոգեկերտվածքից, որին, սակայն, իրական հակադրություններում խորթ չէ սրի ու հզորության գաղափարաբանությունը: Բարությամբ ու կառուցողական հոգեբանությամբ է իր գործունեությունը ծավալում Հ. Խաչատրյանի հաջորդ վեպի հերոսը՝ Արտաշեսը, որը ևս հայոց պատմության միֆականացված դեմքերից է:

---

[35] *Հ. Խաչատրյան, Արտավազդ, էջ 11:*
[36] *Նույն տեղում, էջ 167:*
[37] *Նույն տեղում, էջ 261:*
[38] *Նույն տեղում, էջ 264:*

Централизация одного персонажа в историческом романе
А. Хачатряна «Артавазд»

Ж.Бегларян

Резюме

В статье автор выдвигает значимость исторического романа А. Хачатряна «Артавазд» в ряду его исторических романов. Убедительным литературоведческим анализом роман оценивается с литературно-художественной, эстетической и познавательной позиции. К образу Артавазда писатель обращается в «Тигране Великом», далее образ Арташесидского властителя развертывается во второй книге «Артавазд», где царь царей Артавазд представлен трагическим персонажем. Это освоение нового качества в общей системе персонажей писателя.

The Centralization of one Personage in H. Khachatryan's
"Artavazd" Historical Novel

Zh.Beglaryan

Summary

The article is devoted to the place of H. Khachatryan's "Artavazd" novel in a series of his historical novels. By means of convincing literary analysis the novel is evaluated from the artistic, aesthetic and cognitive position. The author turns to the figure of Artavazd in "Tigran the Great", then developes the figure of the Artashesyan ruler in the second book "Artavazd", in which the king of the kings is introduced as a tragical personage. This is a mastering of a new quality in the common system of the author's personages.